
1946-1947 ԹՈՒԱԿԱՆՆԵՐՈՒ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹԻՒՆԸ
ԵՒ ԱՆՈՐ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐԸ ՍՈՒՐԻԱԶԱՅ ԳԱՂՈՒԹԻՆ ՎՐԱՅ

ՅԱԿՈՒ ՉՈՒԱՔԵԱՆ

Հայրենադարձությունը վերջին հարիւրամեակի մեր պատմութեան մնայուն երեւոյթներէն մէկն է, որ Հայաստանի առաջին Հանրապետութեան կարճատեւ շրջանէն ետք շարունակուեցաւ Խորհրդային Հայաստանի ժամանակ եւս եւ կայ նաեւ ներկայիս՝ երրորդ հանրապետութեան պայմաններուն մէջ: Այս շղթային մէջ մեծ կարեւորութիւն ունի 1946-1948 տարիներուն իրագործուած Մեծ հայրենադարձութեան բազմակողմանի ուսումնասիրութիւնը:

Հայրենիքին մէջ հայրենադարձներու ընդունելութեան, անոնց առջեւ ստեղծուած դժուարութիւններուն, զանգուածային արքորի, անոնց կրած հիասթափութիւններուն եւ վերջապէս՝ դեռ Խորհրդային իշխանութեան տարիներուն երկրէն փախչելու, արտագաղթելու երեւոյթը, հանրայայտ իրողութիւն ըլլալով հանդերձ միայն երրորդ հանրապետութեան այս շրջանին է որ գիտական քննարկումներու կ'ենթարկուի: Հրատարակուած յօդուածներն ու մենագրութիւնները, հայրենադարձութեան մեր ունեցած փորձերուն ու անոնց հետեւանքներուն մասին հանրային եւ գիտական քննարկումները կարելոր բացայայտումներ կ'ընեն եւ օգտակար կ'ըլլան հայրենադարձութեան իւրաքանչիւր ալիք ողջունելու պատրաստուած կերպով:

Սակայն փաստ է, որ 1946-ի հայրենադարձությունը կատարուեցաւ տարերային կերպով: Կազմակերպչական աշխատանքներէն դուրս մնացին Սփիւռքի՝ այս պարագային տուեալ գաղութի ազգային-թեմական իշխանութիւնները: Եւ ատիկա բնականաբար մեծ ցնցումներ կրնար պատճառել մէկ կողմէ տուեալ երկրի պետական իշխանութիւններուն եւ միւս կողմէ տեղւոյն հայ գաղութներուն միջեւ, մանաւանդ նոր ու աննախատեսելի դժուարութիւններու առջեւ կը դնէր մնացողները համայնքային կեանքը վերակազմաւորելու տեսակետէն: Այդպէս ալ եղաւ Սուրիոյ հայութեան պարագային: Շատ վայրերու մէջ գրեթէ անկարելի եղաւ վերականգնել համայնքային հաստատութիւնները՝ եկեղեցի, դպրոց, ակումբ, եւ ատիկա պատճառ եղաւ հայութեան նոր տեղաշարժերու կամ ընդհուպ արտագաղթի մեծ ալիքի: Ահաւասիկ հայրենադարձութեան այս երեսն է, որ համեմատաբար քիչ անգամ ուշադրութեան առարկայ դարձած է:

Նիւթը կրնայ արդիական հնչեղութիւն ունենալ, որովհետեւ այսօր

եւս կը հնչեն հայրենադարձութեան կոչեր, որոնք կրնան տարերային ալիքներ ստեղծել ու վտանգներով յղի ըլլալ ո՛չ միայն ներգաղթողներուն, այլեւ պարպուող համայնքներուն համար: Յօդուածին համար հիմնական սկզբնաղբիւր հանդիսացած են Մեծի Տանն Կիլիկիոյ Բերիոյ (Հալէպի) թեմի Քաղաքական ժողովի ատենագրութիւնները:

Ա. Սուրիահայ գաղութի վիճակը եւ հայրենադարձութեան ստեղծած խանդավառութիւնը

1945-ի Մայիսին Սուրիոյ մէջ բաւական կը սրի ֆրանսական գաղութատիրական զօրքերը Սուրիայէն դուրս հանելու եւ ամբողջական անկախութեան հասնելու պայքարը: Կը պատահին արինալի բախումներ: Ֆրանսական զօրքերը կը քաշուին զօրանոցները: Տեղական կառավարութիւնը բոլոր համայնքներու պետերուն կը հրաւիրէ ժողովուրդը հանդարտութեան մէջ պահելու: Հալէպի մէջ 19 Յուլիս 1944-ին ընտրուած Բերիոյ Թեմի Ազգային Վարչութեան Քաղաքական ժողովը խորհրդակցական նիստեր կ'ունենայ Գաւառական ժողովին, Ազգ. Ընդհանուր եւ Կրօնական ժողովներու դիւաններուն հետ՝ ճշդելու հայ համայնքին քաղաքականութիւնը. «Ըլլալ տեղացի տարրին հետ եւ չբաժնուիլ անկէ»¹:

Քաղաքական ժողովը իր 23 Յունիս 1945-ի նիստին կը քննէ առանձին պարագաները եւ որոշումներ կ'առնէ: Այսպէս՝ կ'արձանագրուի, որ դժուար վիճակի մէջ կը յայտնուին ֆրանսացիներու մօտ աշխատող զինուորականները եւ սիվիլ պաշտօնեաները: Ասոնց շարքին կը գտնուէին նաեւ հայեր: Ոմանց կը յաջողէր անմիջապէս հեռանալ զօրանոցներէն ու անցնիլ տեղական կառավարութեան կողմը կամ նուիրուիլ ազատ աշխատանքի: Հայկական իշխանութիւնները տեղական կառավարութեան կողքին են ու կ'աշխատին, որ հայ տարրը անվստահութեան վիճակ մը չստեղծէ յաշտ տեղացիներուն: Այդպիսի մթնոլորտ մը ստեղծելու բարենպաստ առիթ կը դառնայ Տօ Գընոյի անունով Բօլ Սուրատեանի կողմէ 21 Յունիս ժամը 13.30ին Առաջնորդ հօր եղած ազդարարութիւնը, ուր ի միջի այլոց ըսուած է. «Այսօրուրնէ (21 Յունիս) սկսեալ, ֆրանսացիներու մօտ ծառայող զինուորները, ինչպէս նաեւ սիվիլ պաշտօնեաները ֆրանսահպատակ կը դառնան, եթէ ուզեն»: Առաջնորդը պատուիրակութեան մը հետ կ'այցելէ Հալէպի նահանգապետը, ինդրե-

¹ Քաղաքական ժողովը (անդամներ՝ Ազիբեան Գառնիկ, Գասապեան տոքթ. Յակոբ, Խանձողեան Ճորճ, Պատիկեան Յակոբ, Սալաթեան տոքթ. Աբգար, Տագետեան Յովհաննէս, Տոլպագեան Հմայեակ) 25 Մայիս 1945-ին կ'արձանագրէ. «Մեզի օժանդակ կանչեցինք Տիար Նազարէթ Ֆաթրգճեանը, Միհրան Հերարդեանն ու Ռուբէն Եաղազեանը, որպէսզի մեր գործունէութեան եւ մեր ուղեգծին աւելի մօտէն տեղեակ ըլլան Հայ ժողովուրդի բոլոր տեսակի մտածողութիւնները: Օժանդակ կանչեցինք նաեւ տիար տոքթ. Ատուր Գապագեանը, որպէսզի կարենանք աւելի սերտ կերպով կապ պահել տեղացի արաբ դէկավար տարրին հետ» (Դիւան Բերիոյ Թեմի Առաջնորդարանի, Երկամեայ տեղեկագիր Ազգային Վարչութեան Քաղաքական ժողովոյ Բերիոյ թեմին, 19 Յուլիս 1944 - 30 Սեպտեմբեր 1946, Բերիոյ թեմի Քաղաք. ժողովի ատենագրութիւն, տոմար 59, 1946, էջ 25):

լու այդպիսի անհատներու ֆրանսահպատակութիւնը արգիլելու կամ զանոնք հայկական շրջանակէն հեռացնելու խնդրանքով, որպէսզի անվստահութեան մթնոլորտ չստեղծուի, որ «պատրուակ չճառայէ տգէտ ամբոխին՝ հայաբնակ թաղերէն ներս խուժելու, կողոպտելու եւ թալլելու, այդ կերպով, Աստուած մի արասցէ, հայ եւ արաբ բախումի մը պատճառ դառնալու»: Այդպիսի դէպք մը կը պատահի Ճարապլուսի մէջ: Կառավարութիւնը լիովին կը գնահատէ հայոց Առաջնորդարանի եւ ժողովուրդի պարկեշտ եւ ուղիղ ընթացքը ու ձեռք առնուած միջոցները ֆրանսացիներու մօտ ծառայութեան մէջ գտնուող հայերուն վերադարձը ապահովելու համար: Կ'արձանագրուի, որ «ֆրանսացիներու մօտ աշխատողներուն ֆրանսահպատակութիւն տալու մասին պ. Ֆօ Գընոյի անունով եղած արտայայտութիւնը խոշոր պլըֆ մըն է»: Ազգային վարչութիւնը կ'որոշէ քահանայ հայր մը ուղարկել Տէր Զօր, համոզելու համար ֆրանսական զօրանոց ապաստանած 25 ընտանիքները, որ քաղաք իջնեն, որովհետեւ այդ ընթացքով անվստահութեան մթնոլորտ կրնան ստեղծել: Ռազգայի մէջ գայմագամին ղեկավարութեամբ կազմուած է չորս հոգինոց յանձնախումբ մը քաղաքի գործերը վարելու համար: Անոնցմէ մէկն է տեղւոյն Թաղական խորհուրդի ատենապետը: Ստեղծուած կամաւորական խումբին մէջ նաեւ ներգրաւուած են հայ կամաւորներ²:

Հայ համայնքը չափազանց զգօն է յատկապէս խառնակցութիւններու եւ գրգռութիւններու հանդէպ: Սուրիոյ բնակչութեան մէջ երկպառակցութիւններ ստեղծելու միտումներ կ'երեւին, յատկապէս ցեղային եւ կրօնական հիմունքներով բախումներ ստեղծելու միտումներ: «Խառնակցական այս գործէն անմասն չմնաց դրացի թուրք մամուլը եւ բազմիցս սուտ ու դիտաւորեալ լուրերով շոնդալից կերպով ծանոյց հայ եւ արաբ բախումներ»: Հայ համայնքը կրցաւ միշտ պարզել իր միակամութիւնը սուրիական կառավարութեան եւ սուրիացի ժողովուրդին հետ³:

Համաշխարհային Բ. պատերազմէն անմիջապէս ետք, 21 Նոյեմբեր 1945-ին, Խորհրդային Միութիւնը հայրենադարձութեան որոշում ընդունեց: Խորհրդային Հայաստանը այս որոշումին լոյսին տակ սեղանի բերաւ սփիւռքահայութեան հայրենադարձութեան խնդիրը: Սփիւռքահայերու ներգաղթը ղեկավարելու համար ԽՍՀՄ արտաքին գործերու ժողկոմի որոշումով ստեղծուեցաւ յատուկ յանձնաժողով: Սփիւռքի երկիրներուն մէջ կազմուեցան ներգաղթի կոմիտէներ:

Սուրիահայութիւնը մեծ խանդավառութեամբ ընդունեց անտիսը: Հայրենադարձութեան զանգուածային արձանագրութիւնները մեծ աղմուկ հանեցին: Այդ խանդավառութիւնը գլխաւորաբար ունէր հայրե-

² Տե՛ս Դիւան Բերիոյ Թեմի Առաջնորդարանի, Բերիոյ Թեմի Քաղաք. ժողովի ատենագրութիւն, տոմար 59, ԼԲ. նիստ, 23 Յունիս 1945, առաջին երէք օրակարգերը:

³ Տե՛ս նոյն տեղը, Երկամեայ տեղեկագիր Ազգային Վարչութեան Քաղաքական Ժողովոյ Բերիոյ թեմին, 19 Յուլիս 1944-30 Սեպտեմբեր 1946, տոմար 59, էջ 26:

նասիրական դրդապատճառ: Հայրենիք վերադառնալու, այնտեղ ապրելու եւ աշխատելու, հոն քարը քարին վրայ դնելու ապրումները համակած էին բոլորը:

Նոյն օրերուն, 17 Ապրիլ 1946-ին, Սուրիան անկախացաւ: Ֆրանսան Սուրիայէն հեռացուց իր զօրքերը: Սուրիահայութեան հայրենադարձութեան ստեղծած աղմուկը ինչպէ՞ս պէտք է ընկալէր նորանկախ երկիրը...:

Հոս յայտնենք, որ 1946-ին սուրիահայութիւնը լրիւ կազմակերպուած վիճակ մը կը ներկայացնէր: Հայութիւնը շուրջ 80 բնակավայրերու մէջ (գիւղ, արուարձան, քաղաք) կ'ապրէր համախումբ կերպով. գիւղական միջավայրերու մէջ հիմնական զբաղումներն էին հողագործութիւնն ու արհեստները, իսկ քաղաքներու մէջ՝ արհեստներն ու առեստուրը, պաշտօններն ու տարբեր մասնագիտութիւնները: Բոլոր հայերը սուրիացի քաղաքացիներ էին: Գաղթականներու հիւղաւանները արդէն անցեալ էին. մարդիկ տուն ու տեղ, կալուած ու սեփական տնտեսութիւն կազմակերպած էին: Առաքելական հայերը կը մտնէին թեմական երկու իշխանութիւններու տակ՝ Դամասկոսի եւ Բերիոյ. վերջինիս մաս կը կազմէր Ճեզիրէի առաջնորդական փոխառնորդութիւնը: Կաթողիկէ եւ աւետարանական համայնքները նոյնպէս ունէին իրենց թեմական իշխանութիւնները: Չկար գիւղ ու արուարձան, որ չունենար իր հոգեւոր ու կրթական կառոյցները: Չկար ընտանիք, որ ներգրաւուած չըլլար համայնքային եւ ազգային կեանքին մէջ: Գերազանցապէս թրքախօս, քրտախօս, արաբախօս եւ բարբառախօս հայ գաղթականութեան մէջ արեւմտահայերէնը արդէն խօսակցական ու գրական լեզուի իր ճամբան բացած էր: Ամէն տեղ կը գործէին կուսակցական-գաղափարական բջիջները, եռանդուն գործունէութիւն կը ծաւալէին մարզական, բարեսիրական եւ մշակութային միութիւններու մասնաճիւղերը: 1946-ին, ութսուն բնակավայրերու մէջ միաժամանակ կը գործէին 124 հայկական վարժարաններ, որոնք ունէին պատկանելիութեան հետեւեալ պատկերը. ազգային եւ ՀԲԸՄ-ի նպաստընկալ ազգային՝ 67, միութենական (Կիլիկեան, Ուսումնասիրաց, Կրթասիրաց, Ջաւարեան եւ Միացեալ ցանցերը)՝ 12, կաթողիկէ (ժողովրդապետական, Անարատ Յղութեան, Միսիթարեան, Յիսուսեան, Ֆրանչիսկեան)՝ 24, աւետարանական՝ 15, աղանդաւորական՝ 2, անհատական՝ 2, խառն՝ հայ եւ ոչ հայ՝ 2 (Ալեքիփօ Գոլէճ եւ Բեդիեզդա)⁴:

Հայերը Սուրիոյ մէջ արդէն ելած էին գաղթականի իրենց իրավիճակէն դուրս ու կ'ապրէին բնական պայմաններու մէջ:

⁴ Հայոց ութսուն բնակավայրերու (գիւղ, արուարձան, քաղաք) եւ անոնց հայկական դպրոցներու ցանկը տե՛ս **Յակոբ Չոլաքեան**, Սուրիոյ մէջ 1945-1946 կրթաշրջանին գործող հայկական վարժարաններու ցանկը՝ ըստ տեղի, «Սուրիոյ հայերը – Գիտաժողովի նիւթեր (24-27 Մայիս 2015)», Հայկազեան Համալսարան, Պէյրութ, 2018, էջ 659:

Բ. Հայրենադարձության տարերայնության ստեղծած մտահոգությունները պետական և ազգային մարմիններու մօտ

Ահաւասիկ, այս պատկերին առջեւ հայրենադարձության զանգուածային կերպով արձանագրուողները եւ ներգաղթի կոմիտէներուն յայտարարութիւնները լուրջ մտահոգութիւններ կը ստեղծէին Սուրիոյ ազգային եւ պետական շրջանակներուն մէջ: Խորհրդային Միութեան ներկայացուցիչ Սոլոտը 1946-ի Մայիսին նորանկախ Սուրիոյ վարչապետ Սաստալլահ Ճապրիին հետ ունեցած հանդիպումի մը ընթացքին կը յայտարարէ, թէ «Սուրիա հաստատուած հայերը տարեկան 10 000 հոգիով պիտի փոխադրուին Հայաստան»⁵: Այդ օրերուն արդէն արձանագրուողներուն ու մեկնելու պատրաստուողներուն թիւը բազմակի աւելի էր: Օրինակ՝ Բերիոյ թեմի Քաղաքական ժողովին մէջ Նազարէթ Ֆրսթըրզէան հաւանական չի գտներ, որ «ներգաղթողներու համեմատութիւնը հաւաքական ներգաղթի տարի ընդունելով 1947-ը, 50%-է աւելի ըլլայ»⁶: Իսկ ասիկա շուրջ 50 հազար հոգի կ'ենթադրէր: Այս վիճակը պետական շրջանակներուն համար երկու մեծ մտահոգութիւններ կը ստեղծէր. նախ՝ զանգուածային գաղթի հետեւանքով ստեղծուելիք տնտեսական վիճակի խանգարումը, երկրորդ՝ մեկնումի սպասողներուն երկհպատակութեան ստեղծելիք դժուարութիւնները: Կար նաեւ մնացողներուն ճակատագիրը: Հայերը վերջին հաշուով այս երկրին մէջ կը նկատուէին ֆրանսական հոգատարութեան պատսպարեալները: Հայերը կրցած էին վստահելի տարր մը դառնալ յաշտ ժողովուրդին եւ պետութեան, բայց ներկայիս հայրենադարձութեան այս զգացական զօրաւոր ալիքը կրնար հակառակ անդրադարձ ձգել: Ասոր համար ալ նոյն օրերուն վարչապետ Սաստալլահ Ճապրի երկրի խորհրդարանի հայ անդամ Հրաչ Փափագեանին կը յայտնէ, թէ ինք «Շատ գոհ է հայ ժողովուրդէն եւ անկեղծօրէն փափաքող, որ հայերը մնան Սուրիա, ուր պէտք կայ իրենց, մանաւանդ հիմա, երբ մեկնած են օտարները եւ հայեր կրնան մեծապէս նպաստել երկրի բարգաւաճման, որպէս ճարտարագործ եւ մեքենագիտական գործերու մէջ ձեռներեց տարր: Զանգուածային գաղթով մեծ բաց կը գոյացուի Սուրիոյ ճարտարարական ու հողագործական կեանքին մէջ, քանի որ արհեստաւորներուն մեկնումով շուկան, իսկ հողագործներու մեկնումով ամբողջ գիւղեր ամլութեան պիտի դատապարտուին»⁷: Անդրադառնալով Սոլոտի վերոյիշեալ յայտարարութեան՝ կ'ըսէ. «Բայց եթէ հայ տարրը, հակառակ այս անկեղծ հաւաստումներուս, փափաքող է մեկնելու, մեր կողմէ պիտի չհանդիպիք Ձեզ արգիլող եւ ակամայ հոս մնալու դատապարտող որեւէ քայլի,

⁵ Դիւան Բերիոյ Թեմի Առաջնորդարանի, Բերիոյ թեմի Քաղաք. ժողովի ատենագրութիւն, տոմար 59, 6 Յունիս 1946, նիստ ԾԲ.:

⁶ Նոյն տեղում, 8 Յունիս, 1946, նիստ ԾԳ.:

⁷ Նոյն տեղում, 6 Յունիս 1946, նիստ ԾԲ.:

ինչպես պիտի չարգիլեինք Ամերիկա կամ այլուր մեկնիլ ուզող տեղացիի մը, կը բաւէ, որ մեկնելիքները որոշ ատենի մը մէջ եւ զանգուածօրէն մեկնին, ոչ թէ տարեկան որոշ տոկոսով միայն: Վստահ եղէք, թէ կը սիրեմ հայերը, բայց աւելի կը սիրեմ հայրենիքս, որուն պատասխանատու վարիչն եմ այսօր: Ուստի, հաղորդեցէք առ որ անկէ, թէ փափաքող չենք եւ պիտի չընտրուենք, որ *կրկնակ հայատակութեամբ* մարդիկ գտնուին մեր հողին վրայ, մեր նորաստեղծ հայրենիքը խաղալիք չդարձնելու համար օտար դիւանագիտութեանց վտանգաւոր խաղերուն: Ես պ. Սոլոտին պիտի ըսեմ, դուք ալ ըսէք Ձեր իշխանութեանց, թէ անոնք որոնք մեկնելու արձանագրուած են, մէկ ամսուան շրջանին պէտք է *լիքիւն* ընեն իրենց գործերը եւ բաժնուին Սուրիայէ. այլապէս, կը կրկնեմ, հանդուրժելի չէ, որ այս հողին վրայ մնան երկհպատակ բազմութիւններ»⁸:

Դամասկոսի հայոց կաթ. փոխանորդ Եփրեմ եպս. Տոհմունի տեղեակ կը պահէ, որ պետական շրջանակներէ իրենց թեմին նման յայտարարութիւններ չկան եւ «թէ ինք հաւատացողը չէ որ պ. Ճապրի ներգաղթի հարցին մէջ խափանողական ընթացք մը բռնէ»⁹:

Սուրիական պետութեան, այս պարագային՝ վարչապետ Սատալլահ Ճապրիի արտայայտած մտահոգութիւնները աւելի քան տեղին էին: Մեծ վախ կար, որ հողագործութեան, արհեստագիտութեան, մասամբ նաեւ առեւտուրի եւ տարբեր մասնագիտութիւններու բնագաւառներէն ներս մեծ պարապտութիւն մը պիտի ստեղծէ հայրենադարձութիւնը:

Ներգաղթի ստեղծած այս տարերային թոհուրոհին մէջ նոյնքան մեծ մտահոգութիւններ ունէին հայ ազգային թեմական իշխանութիւնները: Հակառակ Ներգաղթի կոմիտէի ներկայացուցիչներու շնորհալից յայտարարութիւններուն՝ ազգ. իշխանութիւնները գիտէին, որ հայ տարրի նուազագոյն կէտը պիտի տեղէն չշարժի եւ ատիկա նոր մտահոգութիւններ պիտի բերէ. անխուսափելի պիտի դառնան համայնքներու վերակազմութիւնը, ներքին տեղաշարժերն ու արտագաղթը, պիտի ծագին կալուածական խնդիրներ, վերաբնակեցման պարագաներ եւ այլն: Ու բնականաբար կ'ուզէին, որ հայրենադարձութիւնը դուրս գայ իր տարերային ալիքէն ու կազմակերպուած բնոյթ ունենայ: Ներգաղթի գործողութիւնները կը կատարուէին Ներգաղթի կոմիտէներու կողմէ՝ նախագահութեամբ եւ ղեկավարութեամբ Խ. Հայաստանէն Սուրիա եկած երկու պատուիրակներու: Բերիոյ թեմի Քաղաք. ժողովը այս մասին կը գրէ. «Կիլիկիոյ կաթողիկոսութեան ենթակայ բոլոր թեմերուն մէջ Ազգային իշխանութիւնները այս գործով զբաղելու եւ ղեկավարելու չկոչուեցան դժբախտաբար»¹⁰: Ազգ. կեդրոնական վարչութիւնն ալ կը

⁸ Նոյն տեղում:

⁹ Նոյն տեղում, 8 Յունիս 1946, նիստ ԾԳ.:

¹⁰ Դիւան Բերիոյ թեմի Առաջնորդարանի, Երկամեայ տեղեկագիր Ազգ. վարչութեան Քաղաքական ժողովոյ 19 Յունիս 1944-30 Օգոստոս 1946, տումար 59, էջ 21:

զգուշացնէ միջամուխ ըլլալէ. այսպէս՝ 29 Յունիս 1946 թուականի համար 61 նամակով Գարեգին Ա. կաթողիկոս Յովսէփեան կը գրէ Հալէպի թեմին. «...Ձեզի ծանօթ է, թէ Ազգ. իշխանութիւնները ամէնուրեք պաշտօնական մասնակցութիւն չեն ունեցած ներգաղթի գործին մէջ, որ կը մնայ երկու պետութիւններու միջեւ կատարուելիք խնդիր մը: Ներգաղթը տեղի կ'ունենայ անկախ Ազգ. իշխանութիւններու պաշտօնական մասնակցութենէն, հետեւաբար յանձնարարելի է, որ ազգ. պաշտօնական ռեւէ մարմին պաշտօնապէս չգրադի նոյն հարցով»¹¹:

Այսուհանդերձ՝ Բերիոյ թեմի առաջնորդարանը չ'ուզէր ձեռնածալ նստիլ նախատեսուող որոշ վտանգներու դիմաց, այսպէս՝ «Ներգաղթի ամբողջ տեւողութեան ընթացքին ժողովուրդին կողմէ ցոյց տրուած աճապարանքը տեսնելով, որով կ'ուզէին ժամ առաջ ձեռքէ հանել երկար տարիներու ընթացքին եւ տքնաջան աշխատանքի գնով իրենց տէր եղած շարժուն ու մանաւանդ անշարժ կալուածները,- շատ անգամ մեռած գնով,- եւ միւս կողմէ նկատի ունենալով ներգաղթի գործով զբաղող պաշտօնական մարդոց եւ մարմիններու կողմէ եղած արտայայտութիւնները, թէ Սուրիայէն, Լիբանանէն ու արտասահմանեան այլ գաղութներէ այս տարի սահմանափակ թուով հայեր միայն պիտի ներգաղթէին, Վարչութիւնս 12 Յուլիսին խորհրդակցական երկրորդ հանդիպում մը ունեցաւ Առաջնորդարանիս մէջ վերեւ յիշուած դիւաններու եւ երեսփոխաններու մասնակցութեամբ (Ազգ. գաւառական ժողովի, Ազգ. ընդհանուր ժողովի եւ Կրօնական ժողովի դիւաններու մասնակցութեամբ, ինչպէս նաեւ պետական երկու հայ երեսփոխաններու) եւ նկատելով որ 25 տարիներու հայ քրտինքի եւ վաստակի արդիւնք եղող կալուածները ձեռքէ կը հանուին չնչին գինով եւ եթէ պատահի, որ իրենց տունն ու կալուածը ծախելէ վերջ, յաջողին ներգաղթել, այդպիսիները վերահաս ձմրան ընթացքին պիտի մատնուին սհաւոր դժուարութեանց, եւ նկատելով մանաւանդ՝ որ տրամաբանական պիտի ըլլար, որ շրջաններու ներգաղթը տեղի ունենար զանգուած առ զանգուած, գիւղ առ գիւղ, որոշեց յուշագրով մը ներգաղթի պատուիրակներուն ուշադրութեան յանձնել այս պարագաները եւ խնդրել որ՝ ա) Յայտարարուին այս տարի ներգաղթելիք ազգայիններու թիւը, անունները եւ մեկնումի թուականը: բ) Այնպէս մը կարգադրել որ շրջանները գիւղ առ գիւղ եւ ամբողջութեամբ վերցուին: գ) Ներգաղթող հայերու կալուածական խնդիրներով զբաղելու համար յատուկ մարմին մը կազմուի Առաջնորդարանիս մասնակցութեամբ, նկատելով որ յաչս պետութեան ան Հայ ժողովուրդին պատասխանատու է, ըստ ամենայնի»¹²: Ազգային իշխանութեան համար շատ կարեւոր էր, որ փոքրիկ բնակավայրերու պարագային ներգաղթի մասնակցէին բոլորը, որովհետեւ այդպիսի վայրերու մէջ մեծապէս նուազած բնակչութեան համար գրեթէ անկա-

¹¹ Նոյն տեղում:

¹² Նոյն տեղում, էջ 21-22 :

րելի պիտի ըլլար հոգեւոր ու կրթական կեանքի շարունակութիւնը: Նոյնքան կարեւոր էր կալուածական խնդիրները ձեռք առնելը, քանի որ պատահական վաճառքի պարագային կրնար օտար տարր մը մտնել գուտ հայաբնակ վայրերէն ներս ու յետագային նոր դժուարութիւններու պատճառ հանդիսանալ: Յետագային պատուիրակ եւ կոմիտէի նախագահ Ա. Գալէնքերեան կը յայտնէ, թէ «առաջին եւ երկրորդ կէտերու համար ոչ մէկ կարգադրութիւն կարելի է ընել, իսկ համամիտ էին երրորդ կէտի իրագործումին», որուն հիմքերը Ա. եւ Բ. կէտերու առաջարկութիւնները նկատելով՝ «դժբախտաբար կարելի չեղաւ ստեղծել մեկնողներու կալուածական հարցով զբաղող մարմին մը»¹³:

Ներգաղթը երկու պետութիւններու մէջ կարգադրուած հարց ըլլալով հանդերձ, սուրիական կառավարութիւնը այդ հարցով միշտ իր կայերը կը հաստատէ Առաջնորդարանի միջոցով: Այդ մասին Քաղաք. ժողովը կ'արձանագրէ. «Սուրիական կառավարութիւնը իր յարաբերութիւնը Ներգաղթի կոմիտէին հետ պահեց Առաջնորդարանիս միջոցաւ: Հոգածու գտնուեցանք Ներգաղթի կոմիտէին հաղորդուելիք կառավարական որեւէ հրահանգ եւ կարգադրութիւն օրը օրին փոխանցել Կոմիտէի դիւանին, գործը չդժուարացնելու կանխահոգութեամբ»¹⁴: Ասիկա առաւելաբար հայ գաղութի հանդէպ կառավարութեան ունեցած վստահութեան հաստատումն է, որպէսզի երբեք կասկած չարթննայ, որ տեղական իշխանութիւններու մէջ հայրենադարձութեան հետեւանքով վերաբերմունքի բեկում մը առաջացած կրնայ ըլլալ հայ գաղութի նկատմամբ:

1946-ի Յունիսէն Սեպտեմբեր՝ ութը կարաւաններով Սուրիայէն եւ Լիբանանէն կը ներգաղթեն միայն 20 000 հայեր¹⁵:

Գ. Համայնքներու վերակազմութեան դժուարութիւնները հայրենադարձութենէն ետք

23 Սեպտ. 1946-ի վերջին կարաւանի մեկնումի օրերուն՝ Հանրապետութեան նախագահին՝ Շուքրի Պէյ էլ-Գուվէթիի անունով Բերիոյ թեմի առաջնորդ Զարեհ վրդ. Փայասլեան կը պարզեւատրուի «Արժանեաց շքանշան»ի Ա. կարգի պատուանշանով: Ասիկա սուրիական պետութեան կողմէ Սուրիա մնացած հայ տարրին հանդէպ ունեցած վստահութեան հաւաստիքն է: Մետալի յանձնումի արարողութեան աւտեն Հալէպի նահանգապետ Մուսթաֆա էլ-Շահապի բարձր գնահատելով 1914-1918-ին Սուրիա եկած ու հաստատուած հայերը, «որոնց եւ մեզի համար հաւասարապէս չարիք էր հասցուցած իթթիհատականներու բռնատիրական քաղաքականութիւնը օսմանեան պետութեան օրերուն» ըսելով կը շարունակէ. «Թերեւս քիչեր կային, որոնք անցեալի

¹³ Նոյն տեղում, էջ 22:

¹⁴ Նոյն տեղում:

¹⁵ Տե՛ս նոյն տեղը, էջ 21:

այդ օրերուն կը հաւատային թէ վախնալու ռեւէ պատճառ չկայ: Իմ անհատական մտածումս ու համոզումս այն էր, որ ցեղային առաքինութիւններով օժտուած ազնիւ ժողովուրդ մը, որպիսին էր հայը, պիտի կարենար գնահատել մեր ազգային պայքարը ու կանգնիլ մեր կողքին, օտարին դէմ, եթէ անշուշտ մենք զիստայինք օգտուիլ անոնց օժանդակութենէն թէ ծառայութիւններէն: Ապահով էի, թէ այդ տառապահար բազմութիւններու միակ նպատակն էր հանգիստ ու անվրդով կեանք մը կերտել այս հողերուն վրայ:

Տնտեսական կալուածի վրայ, անհրաժեշտ կը նկատէի աշխատող ձեռքեր ապահովել արհեստագիտական թէ մասնագիտական աշխատանքներու համար, ու վստահ էի, թէ հայերը լաւագոյն արդիւնքով կրնան պսակել իմ այդ ակնկալութիւններս: Սուրիոյ տնտեսական վերելքին համար գրաւական մը կը կազմէր այդ գաղթականութիւնը: Իրօք ալ, հազիւ քառորդ դարու շրջանէ մը վերջ, ահա իրականացած կը տեսնենք իմ եւ սուրիացի ժողովուրդին յոյսերը:

Հայերը իրենց երկրորդ հայրենիքը կը նկատեն Սուրիան ու կը մերժեն օտարներու փայլուն խոստումները, ցցուելու համար մեր դէմ: Անոնք կը բաժնեն մեր ցաւերն ու ուրախութիւնները եւ կը ծառայեն բոլորանուէր եւ հաւատարմօրէն: Ո՛չ մէկ խտրութիւն մեր եւ իրենց միջեւ: Կը ցաւինք, որ այսօր անոնց մէկ մասը կը մեկնին Հայաստան: Ներգաղթողներու համար ի խորոց սրտէ կը մաղթենք, որ երջանիկ ըլլան իրենց մայր հայրենիքին մէջ: Վստահ ենք, թէ հոն պիտի յիշեն իրենց երկրորդ հայրենիքը՝ Սուրիան, ու լաւագոյն յիշատակներ պահեն անկէ»¹⁶:

1946-ի հայրենադարձութենէն ետք տասնեակ հազարաւոր մարդիկ, ամէն ինչ ծախած, կը սպասեն իրենց կարգին: Արտագնայ աշխատանքի մեկնած բազմաթիւ հայեր Յորդանանէն, Լիբանանէն, Պաղեստինէն, Սուրիոյ տարբեր վայրերէն եկած էին իրենց բնակավայրերը, լուծարքի ենթարկած ամէն ինչ ու հոս ու հոն մնալով կը սպասէին երկրորդ կարաւանին: Երկրորդ կարաւանը կազմուեցաւ 1947-ի Յունիսին, որուն մաս կազմեցին միայն Քեսապի եւ Աֆրիսի շրջաններու հայերը: Յաջորդ երկու-երեք տարիներուն, մինչեւ 1949, ոմանք մեկնեցան, շատեր հրաժարեցան մեկնելէ, իսկ ոմանց այլեւս առիթ չտրուեցաւ: Ներգաղթողներու ընդհանուր թիւը չհասաւ ակնկալուած 50 % համեմատութեան:

Ներգաղթող հայերու կալուածական խնդիրներով զբաղելու համար Առաջնորդարանի մասնակցութեամբ յատուկ մարմինի մը կազմութեան մասին առաջարկը մերժուած էր, բայց Քեսապի շրջանին մէջ ատիկա ինչ որ չափով իրականացաւ տեղւոյն իշխանութիւններու եւ գաղթողներու միջեւ գոյացած համաձայնութեան մը շնորհիւ: Այս կարգադրութեան մէջ իր ներդրումը ունէր դաշնակցական ղեկավար եւ հա-

¹⁶ Բերիոյ թեմի Քաղաք. ժողովի ատենագրութիւն, տոմար 59, 23 Սեպտ. 1946:

սարակական գործիչ տոքթ. Աւետիս Ինճեճիքեանը, որ շահագրգռուած էր պահելու շրջանին հայկական դիմագիծը: Քեսապցին դրամական հարստութիւն չունէր: Իր հարստութիւնը իր դարաւոր անշարժ գոյքն էր՝ տունը, արտերն ու պարտեզները: Օտարականներ Քեսապ թափանցելով գաղթողներու տունն ու կալուածները գնելու պատրաստակամութիւն կը յայտնէին: Ուստի երեք յարանուանութիւններու (առաքելական, կաթողիկէ, աւետարանական) հովանաւորութեան տակ մեկնող ու մնացող քեսապցիներէն կազմուեցան երկու մարմիններ՝ ներգաղթողներու կալուածները *վաճառող մարմին* եւ ներգաղթողներու կալուածները *գնող մարմին*: Բոլոր կալուածները ցուցակագրուեցան¹⁷:

Համաձայնութիւն գոյացաւ, որ վաճառող կողմը պիտի բաւարարուի խորհրդանշական գումարով մը, իսկ գնող կողմը կը խոստանայ առանց շահի հողերը բաժնել կարիքաւոր մնացողներուն ու գիւղ վերադառնալ ուզող Սուրիոյ եւ Լիբանանի տարբեր քաղաքները գաղթած հողագուրկ ընտանիքներուն: Վերջինները հողին գինը պիտի տան մասնավճարով:

Պահանջուած գումարը գոյացնելու համար գնող մարմինին օժանդակեցին Սուրիոյ եւ Լիբանանի եկեղեցական մարմինները, միութիւնները ու գլխաւորաբար Սուրիահայ օգնութեան խաչի Հալէպի մասնաճիւղը: Անշարժ գոյքը եւ կալուածները գնահատուեցան հետեւեալ կերպ. առաջին կարգի մէջ կը մտնէին ցանքի արտերը. ցանքերը արդէն վերջացած էին: Յանքի բերքերը եկամուտ չէին բերեր: Այս արտերը արժէք չէին ներկայացներ: Երկրորդ կարգի վրայ կու գային ծխախոտի մշակութեան եւ ջրարբի գետինները, դափնիի օճախները, ձիթենիի, թուզի, խաղողի պարտեզները, որոնք տակաւին չէին հաւաքուած: Գնահատուեցաւ ոչ թէ հողը, այլ՝ տարեկան եկամուտը: Օրինակի համար, «Եթէ ծխախոտի արտում կամ պարտեզում հարիւր սիրիական թղթադրամի եկամուտ կար, հաշուի առնուեց 40-45 տոկոսը հաւաքողին է իբրեւ վարձատրութիւն, 15-20 տոկոսը՝ կորուստ բերքի, մնացած 35 տոկոսը տրուեց ներգաղթողին»¹⁸: Եթէ հողատերը հազար սուրիական լիրա եկամուտ ունէր՝ ստացաւ 350 լիրա: Տասնութ տարեկանէն վեր ներգաղթողէն Ներգաղթի կոմիտէն վերցուց 150 լիրա իբրեւ Հայաստան գացողի ճանապարհաձախս, Քեսապէն Պէյրութ իւրաքանչիւր հակի փոխադրողէք գանձեց 12 սուրիական լիրա: Մաղաքիա Պապուճեանը կը յայտնէ, որ քեսապցիներէն գանձուած է 55 000 սուրիական լիրա, որ մեծ գումար էր, մինչ յետոյ յայտնի կը դառնայ, որ նախորդ կարաւաններէն «ո՛չ մի ներգաղթողից ո՛չ մի սանթիմ գումար չի վերցուել, բացի Քեսապի ժողովրդից: ...Այդ պատկառելի գումարը անշուշտ

¹⁷ Տե՛ս **Լրատու**, Քեսապը Մեր Մէջ, «Մասիս» (Պէյրութ), 29 Ապրիլ 1947, էջ 14: **Քեսապցի**, Քեսապ, «Մասիս», 3-7 Մայիս 1947, էջ 3. նաեւ նոյնէն, «Մասիս», 28 Մայիս 1947, թիւ 22:

¹⁸ **Մաղաքիա Պապուճեան**, Քեսապը Հայաստանում, **Յակոբ Չոլաքեան**, «Քեսապ», Գ. հատոր, Հալէպ, 2004, էջ 329:

Հայաստանի կառավարութեան հաշուին չգնաց»¹⁹: Ներգաղթողները կը կարծեն, թէ «Այդ գումարից օգտուել են թէ՛ Հայաստանից եկող Ներգաղթի կոմիտէի անդամները եւ քեսապցի կոմունիստ ղեկավարները եւ թէ Պէրուի շնչակեան կուսակցութեան ներկայացուցիչը»²⁰: Գիւղական վայրերու տուները լքուեցան, չվաճառուեցան, որովհետեւ այդ վայրերուն մէջ բնակիչ չմնաց: Քեսապ աւանին մէջ տուներուն շատ չնչին գումար մը տրուեցաւ: Փաստ է, որ իր կալուածներուն վաճառքին ու գումարին այս ձեւով սպառելուն պատճառով քեսապցի «դատարկ ձեռքով եկաւ ներգաղթեց Հայրենիք»²¹:

Ամէն պարագայի՝ այս առքն ու վաճառքը, ըստ երեւոյթին, որոշ խնդիրներ կը ստեղծէ, որ Լաթաքիոյ կառավարիչը Լաթաքիոյ հայոց եկեղեցոյ թաղականութեան միջոցով այդ պարագան հայոց թեմական իշխանութիւններուն ուշադրութեան կը յանձնէ: Այսպէս՝ Քաղաքական Ժողովը իր 3 Մարտ 1947-ի նիստին²² կը կարդայ Լաթաքիոյ Թաղական Խորհուրդին կողմէ դրկուած 9 Յունուար 1947 թուակիր նամակը, որով կը տեղեկացուի, որ Լաթաքիոյ կառավարիչը թաղականութեան ուշադրութեան յանձնած է Քեսապի մէջ պատահած դէպքերը յաւելելով. «Թէ հակառակ իր հայասիրական զգացումներուն՝ պիտի պարտաւորուի խիստ միջոցներ ձեռք առնել հանրային անդորրութիւնը խանգարելու բնոյթ կրող դէպքերու կրկնութիւնը արգիլելու համար, թէ ինք համոզուած է, որ նման դէպքեր յառաջ կու գան Հայաստան ներգաղթի պատրաստուողներու կողմէ եւ թէ իր բարեկամական թելադրութիւնն է, որ համայնքը ազդու միջոցներ ձեռք առնէ նման տգեղութիւններու առաջքն առնելու համար»²³: Թաղականութիւնը առաջնորդ Ջարեհ եպս. Փայասլեանի եւ Քաղաքական Ժողովի նկատառման կը յանձնէ այս պարագան եւ համապատասխան դարման կը խնդրէ: Քաղաքական Ժողովը նոյն նիստին կ'արձանագրէ, որ Առաջնորդը Պէրուի վերադարձի ճամբուն վրայ կը հանդիպի Լաթաքիոյ կառավարիչին, որ անձամբ իրեն կը պատմէ, թէ «Քեսապի մէջ մնացող եւ երթալու պատրաստուող հայերու միջեւ միջադէպեր անպակաս են, թէ երթալիքներ իրենց տուները քանդելու եւ պարտեզներու պտղատու ծառերը կտրելու վրայ են, բան մը, որ ո՛չ մէկ արդարացում ունի, եւ յաճախ առիթ կ'ըլլայ միջադէպերու: Պր. Կառավարիչը խնդրած է, որ Առաջնորդարանն ալ գործակցի կառավարութեան, միացեալ ճիգերով վերահաստատելու համար խաղաղ ու բնականոն կէանքը Քեսապի հայոց մէջ»²⁴: Քաղաքական Ժողովը կը բաւարարուի Առաջնորդէն խնդրելով, որ «հովուական թուղթ մը ուղղէ

¹⁹ Նոյն տեղում, էջ 330:

²⁰ Նոյն տեղում:

²¹ Նոյն տեղում, էջ 331:

²² Տե՛ս Դիւան Բերիոյ թեմի Առաջնորդարանի, Քաղաքական Ժողովի ատենագրութիւն, տոմար 60, 3 մարտ, 1947-ի նիստէն, էջ 33-44:

²³ Նոյն տեղում:

²⁴ Նոյն տեղում:

Քեսապի շրջանի հայութեան, կոչում ընէ անոնց ազգասիրական զգացումներուն եւ յորդորէ ապրիլ իրարու հետ խաղաղ, սիրալիք եւ համերաշխ կերպով կառավարութեան ուշադրութիւնն ու միջամտութիւնը չիրաւիրելու համար իրենց վրայ»²⁵:

Մեզի ծանօթ չէ, թէ ինչո՞ւ Առաջնորդը Լաթաքիա հասնելով հանդերձ Քեսապ չի բարձրանար, ու Քաղաքական ժողովը կը բաւարարուի Յունուարի սկիզբը եղած հարցերուն ի պատասխան հովուական թուղթով մը քեսապցիները համերաշխութեան հրաւիրելու յորդորով մը բաւարարուի: Հաւանաբար՝ Քեսապէն Տոքթ. Ա. Ինճեճիքեան իրադարձութեան բնոյթի եւ տարողութեան մասին ներքին կարգով տեղեակ կը պահէր Քաղաքական ժողովի կարգ մը անդամներն ու Առաջնորդը եւ կը թելադրէր իրենց հասած բողոքներուն արձագանգել իր խորհուրդներուն համաձայն: Քեսապի Գնող մարմինը այս խլրտումներուն մէջ թերեւս կը տեսներ Քեսապի մէջ կալուածներ ձեռք բերելու արգելքին հանդիսացած ոչ հայերու կողմէ կազմակերպուած գրգռութիւն մը: Այսուհանդերձ՝ Լաթաքիոյ կառավարիչին նկատողութիւնը Կաթողիկոսարան կը հասնի: Կաթողիկոս Գարեգին Ա. Յովսէփեան 28 Մարտ եւ 14 Ապրիլ թուակիր երկու նամակ կը յղէ Բերիոյ թեմի Քաղաքական ժողովի նախագահ առաջնորդ Չարեհ սրբազանին: Երկուքն ալ կը քննարկուին Քաղաքական ժողովի Ապրիլի նիստին²⁶: Առաջին նամակով Գարեգին Ա. Կաթողիկոս Յովսէփեան կը յանձնարարէր Առաջնորդ Չարեհ Սրբազանին «անձամբ երթալ Քեսապ եւ տեղւոյն վրայ լուրջ քննութիւն մը կատարելով կաթողիկոսարան հաղորդէ Լաթաքիոյ կառավարիչին կողմէ Քեսապի հայոց մասին եղած դիտողութիւններուն ճշդութիւնը»²⁷, իսկ երկրորդ նամակով կը յայտնէ, թէ ստոյգ աղբիւրէ տեղեկացած է, որ Քեսապի մասին տրուած տեղեկութիւնները չեն համապատասխաներ իրականութեան, որովհետեւ տուններու քանդում եւ ծառերու կտրատում կատարուած չեն. եղածն ալ պատահական է եւ կապ չունի ներգաղթի հետ. հետեւաբար աւերում չկայ: Որոշ գաղափար մը կազմելու համար, կրկին անգամ կը յանձնարարէ Առաջնորդ հօր որպէսզի անձամբ երթայ հոն եւ տեղւոյն վրայ քննութիւն մը կատարելով արդիւնքը իրեն հաղորդէ: Տոքթ. Ա. Գապագեան թէ՛ Լաթաքիոյ կառավարիչին եւ թէ՛ իրենց համար վիրաւորական կը գտնէ Կաթողիկոսին ոճը, յայտնելով որ «Երանի թէ Վեհափառը հոգածու ըլլար նաեւ մեզի յայտնելու ստոյգ տեղեկատուութեան աղբիւրը»²⁸:

Ժողովը կ'արձանագրէ, թէ Մարտ 11-ին Սրբազան հայրը հովուական թուղթով մը համերաշխութեան կոչ ուղղած է Քեսապի հայութեան:

²⁵ Նոյն տեղում:

²⁶ Տե՛ս Դիւան Բերիոյ թեմի Առաջնորդարանի, Քաղաքական ժողովի ատենագրութիւն, տոմար 60, Ապրիլի 1947-ի նիստէն, օրակարգ 3, էջ 43-44, տե՛ս նաեւ **Յակոբ Չոլաքեան**, Քեսապ, Գ. հատոր, էջ 475-476:

²⁷ Նոյն տեղում:

²⁸ Նոյն տեղում:

Այդ թուականն էս ետք ուել դժուարութիւն կամ խնդիր չէ պատահած, որով ըստ էութեան հարցը փակուած կը նկատուի, այս իսկ նկատառումներով կը յետաձգուի Առաջնորդ Հօր ուղեւորութիւնը դէպի Քեսապ²⁹:

Քեսապէն հայրենիք կը ներգաղթեն 2407 հոգի, որմէ՝ 1435 առաքելական, 395 աւետարանական եւ 577 կաթողիկէ: 1955-ին գիւղ մնացած հայոց թիւն է 1623³⁰: Քեսապի քաղաքապետութեան անձնագրային տոմարներուն մէջ ներգաղթող ընտանիքներու քաղաքացիութենէ ելլելու մասին արձանագրութեան կողքին կարմիրով կը նշուի անոնց «ոչ ցանկալի» (غير مغروپ) ըլլալը: Յետագային՝ գնող մարմինը հողերու հապճեպ բաժանումին պատճառով չկրցաւ գոհացնել հողին պետք ունեցողները ու ժողովուրդին կողմէ արդար քննադատութեան ենթարկուեցաւ³¹: Հողերը անցան մեծ կալուածատերերու ձեռքը: Անոնք այդ կալուածներուն վրայ տեղաւորեցին այլազգի մարապաներ (քառորդ եկամուտով աշխատող ընտանիք), որոնք ալ յետագային հողի սեփականութեան պայմաններու բարեկարգման պետական օրէնքէն օգտուելով տէր ելան այդ հողերուն ու դարձան բնիկներ: Շրջանը կորսնցուց իր գուտ հայաբնակ ըլլալու իրավիճակը:

Հայրենադարձութիւնը ծանր հետեւանքներ ձգեց առհասարակ Սուրիա մնացած ամբողջ հայութեան վրայ: Բազմաթիւ բնակավայրեր հայաթափ եղան ու անցան պատմութեան գիրկը: Դժուար եղաւ այն բնակավայրերու պարագան, ուր ոմանք շարունակեցին մնալ: Բնակչութեան թուի նուազումին հետեւանքով համայնքները կազմալուծուեցան, հոգեւոր եւ կրթական հաստատութիւնները չկրցան ոտքի մնալ: Օտար տարր մը հաստատուեցաւ մեկնողներու տուններուն մէջ. շատ բնակավայրեր կորսնցուցին իրենց գուտ հայաբնակ ըլլալու հանգամանքը: Ասոնք ալ պատճառ հանդիսացան, որ մնացողները իրենց ընտանիքներուն համար նոր ու ապահով կայք մը փնտռեն, կամաց-կամաց լուծարեն երեք տասնամեակներէ ի վեր իրենց շինած ու ձեռք բերած ինչքերը, լքեն դպրոցները, եկեղեցիներն ու գերեզմանները, արտագաղթեն կամ նոր կայք փնտռեն գլխաւորաբար հայաշատ կեդրոններու մէջ: Բազմաթիւ հայաբնակ գիւղեր հանգեցան Ճեզիրէի շրջանին մէջ, Թուրքիոյ սահմանամերձ տարածքներուն մէջ, ինչպէս Թէլ Պրաք, Ճարապլուս, Արաբ Փունար, Այն Արուս, Աֆրին, Թինան եւ այլն, կամաց-կամաց լքուեցան Հալէպի հայաշէն արուարձանները՝ Ասորի Քեմ-

²⁹ Տե՛ս նոյն տեղը:

³⁰ Տե՛ս Ալլամ Քեսապի ու շրջակայից, հրատարակութիւն Քեսապի Ուսումնասիրաց Միութեան Պէրյութի Մասնաճիւղի, Պէրյութ, 1955, էջ 27: Ուրիշ աղբիւր մը կը յայտնէ, որ 1946-ի եւ 1947-ի գոյգ կարաւաններով, Պէրյութէն եւ Քեսապէն, Պէրյութի ճամբով հայրենիք կը մեկնին 3800 քեսապցիներ (Ալպէտ Ս. Թէմիքեան, Քեսապ, Պէրյութ, 1953, էջ 269): Հայրենիք մեկնողները ընդհանուր քեսապցիներուն երկու երրորդը կը ներկայացնեն (Մաղաքիա Պապուճեան, Քեսապը Հայաստանում, Յակոբ Չոլաքեան, «Քեսապ», Գ. հատոր, էջ 331, ծանօթ. 13):

³¹ Տե՛ս Տասնամեակ Կասիոսի հայրենակցական միութեան, 23 Նոյ. 1941 – 23 Նոյ. 1951, Պէրյութ, էջ 22:

բը, Աշրաֆիեն, Շէխ Մագսուտը, Խորդլախը, Հեյլիկը, Պոսթան Փաշան: Բազմաթիւ քաղաքներու եւ աւաններու հայկական համայնքները հետզհետէ չքացան, ինչպէս Տէր Զօրի, Ազէզի, Մումպուճի, Պապի, Համայի, Մալամիէի, Մհարտէի, Ճարը Շուղուրի, իսկ հարաւի մէջ՝ Մագզէի, Գաթանայի, Քունէթրայի, Սուէյտայի, Տրաայի համայնքները: Յատկապէս տուժեցին դարերու հնութիւն ունեցող Քեսապի շրջանի գիւղերը, ինչպէս նաեւ Արամօն ու Ղնեմիէն, որ դարեր շարունակ պահած էին իրենց բարբառը, տոհմիկ դիմագիծը ու ունէին իրենց եկեղեցական եւ կրթական կառոյցները: Քեսապի շրջանը կրցաւ ձեռով մը վերակազմուիլ, բայց Արամօն ու Ղնեմիէն անդառնալի կերպով կորսնցուցին իրենց տոհմիկ դիմագիծը:

Հայրենադարձութենէ ետք ազգային իշխանութիւնները բնականաբար կը լծուին համայնքներու վերակազմութեան աշխատանքին: Բազմաթիւ հարցեր կը ծանրաբեռնեն օրակարգը՝ ամէն բան ծախած, բայց ներգաղթէ զրկուած ընտանիքներու տնտեսական ու կեցութեան խնդիրները, մեծ թիւ կորսնցուցած դպրոցներու պաշտօնէութեան եւ աշակերտութեան մէջ օտարներու թիւի աճը, թափուր մնացած եկեղեցիները, բազմաթիւ ընտանիքներու ներքին տեղաշարժի եւ արտագաղթի բերած խնդիրները, լքուած բնակավայրերու ազգային կալուածներու ճակատագիրը եւ այլն: Յառաջիկայ քանի մը տարիներուն իրարու ետեւէ կը փակուին գիւղական շրջաններու շատ դպրոցներ: 1951-1952 տարեշրջանի վերաբերող ցանկ մը 1945-1946 տարեշրջանի 124 դպրոցներու փոխարէն արդէն կու տայ միայն 77 դպրոց՝ 45 դպրոց հայ առաքելական, 14 դպրոց հայ բողոքական, 16 հայ կաթողիկէ, 2 աղանդաւոր³²: Հայրենադարձութեան հետեւանքով կուսակցական ուժերու կշիռքը կը փոխուի Բերիոյ թեմի հայոց կեանքին մէջ, կը փոխուին թեմական իշխանութիւններու ներքին յարաբերակցական ուժերը. սահկա իր կարգին նոր ալեկոծութիւններ կը պատճառէ համայնքներուն մէջ գոնէ մինչեւ 1960-ական թուականները:

Բանալի բառեր – *Ֆրանսական գաղութատիրութիւն, Սուրիոյ անկախացում, հայրենադարձութիւն, ներգաղթի կոմիտէներ, տարերայնութիւն, պետական տեղական մարմիններ, ազգային իշխանութիւններ, հետեւանքներ, գաղութի համայնքային վերակազմութիւն*

АКОП ЧОЛАКЯН – Репатриация 1946–1947 гг. и её последствия в общине сирийских армян. – Статья посвящена репатриации армян из Сирии в 1946-1947 гг., её характеру, ряду деталей и обстоятельств. Материал может оказаться актуальным, поскольку сегодня нередко звучат призывы к репатриации армян, ещё остающихся в охваченной гражданской войной Сирии. Эти призывы чреватые

³² Տե՛ս Բերիոյ թեմի Ազգ. առաջնորդարան, խառն նամակներու թղթածրար. ըստ երեւոյթին՝ Սուրիոյ բոլոր հայկական դպրոցներու վերաբերեալ սերտողութեան մը արդիւնքն է:

рядом опасностей как для потенциальных иммигрантов, так и для принимающей стороны.

Ключевые слова: *французская зона ответственности (?), обретение Сирией независимости, репатриация, иммиграционные комитеты, разнообразие, местные органы власти, национальные власти, последствия, общинная реформа армянской колонии*

HAGOP TCHOLAKIAN – *The Repatriation of 1946-1947 and It's Influence on the Syrian Community.* – The article presents the elemental nature of the repatriation organized from Syria in 1946-1947 and on the organizational ground the omission of local and national authorities to organizational activities, which bring a bad influence on the continuing communities' future life and restructuring. The material can sound as modernist since there are also calls for repatriation today, which can create natural waves and can be full of dangers not only for immigrants but also for leaving the community.

Key words: *French colonialism, independence of Syria, repatriation, Immigration Committees, elemental state, local authorities, results, community restructuring*